

ԳՐԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում տեղի ունեցան գրական-բանասիրական ընթերցումներ, նվիրված արևմտահայ մեծ հրապարակախոս, դեմոկրատ Հարություն Սվաճյանի ծննդյան 125-ամյակին և նրա «Մեղու» հանդեսի հիմնադրման 100-ամյակին:

Ներկա էին գրականության, արվեստի, պատմության և այլ բնագավառի աշխատողներ:

Ինստիտուտի դիրեկտոր ընկ. Գ. Հովնանը իր ներածական խոսքում նշեց, որ Սվաճյանի ծննդյան 125-ամյակը և նրա «Մեղու» հանդեսի հրատարակության 100-ամյակը, հայ ժողովրդի կուլտուրական կյանքում 1956 թ. նշանավոր իրադարձություններից մեկն է: Բացառիկ մեծ է այն դերը, որ ունեն Հարություն Սվաճյանն ու իր «Մեղուն» հայ ժողովրդի քաղաքական պատմության, կուլտուրայի, արվեստի, ազգային-ազատագրական շարժման, հասարակական կյանքի լուրջ բնագավառներում և հատկապես սուլթանական բռնապետության և եվրոպական ռեակցիայի դեմ մղված պայքարում:

Հարություն Սվաճյանը,— ասաց ընկ. Հովնանը,— հայ ժողովրդի անցյալի այն հերոսական պլեադայի պայծառ ներկայացուցիչն է, որի մարտական առաջնորդն էր Միքայել Նալբանդյանը:

Ցավով պիտի նշել, որ դեռևս չկան Սվաճյանին արժանի, նրա կյանքն ու գործունեությունը, նրա կերպարը լուսաբանող մենագրություններ:

Ընկ. Հովնանի բացման խոսքից հետո լսվեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Կարինյանի՝ «Հ. Սվաճյանի հասարակահայեցության բնութագրման հարցի շուրջը», ֆիլոլոգիական գիտ. թեկնածու՝ Վ. Թերզիրաշյանի «Հ. Սվաճյանի «Մեղուն» և թատրոնը», ֆիլոլոգիական գիտ. թեկնածու Ա. Մանուկյանի՝ «Հ. Սվաճյանը որպես երգիծաբան», արվեստագիտության թեկնածու Մ. Սարգսյանի՝ «Մեղու»-ի ծաղրանկարները» թեմաներով գեկուցումները:

Ա. Բ. Կարինյանը նշեց, որ Սվաճյանը պաշտպանելով հայ դեմոկրատիայի իրավունքները, կրակոտ պայքար է մղել ոչ միայն կղերականության և ամիրայության դեմ, այլ նաև ռեակցիային ձայնակցող «էսնաֆներին» և հատկապես «էսնաֆների» վարքագիծը տնօրինող «երևելիների» դեմ: Յուրաքանչյուր արհեստավոր, նկատում է Սվաճյանը, իր էսնաֆին, «գլխավորին հետ շահու կապերով կապված է...»: Նույն այդ հողվածում Սվաճյանը գրում էր. «շահը՝ էն գորավոր զսպանակն է այս աշխարհիս մեջու էն ցցուն և էն անարժան գործերը գործել կուտա մարդուն...»: Սա շատ ուշագրավ դիտողություն է, որը դժբախտաբար արժանավոր կերպով հաշվի չի առնվել Սվաճյանի մասին գրողների կողմից:

Ա. Բ. Կարինյանը այնուհետև կանգ առավ Սվաճյանի հրապարակախոսական գործունեության վրա, նշելով, որ նա մեծ դեր է կատարել որպես «Մեղու» հանդեսի խմբագիր: Սվաճյանը իր գրական գործունեության երկրորդ կտապում ամուր գաղափարական կապեր է ունեցել Միքայել Նալբանդյանի հետ: Նա իր հողվածներից մեկում ծանրանալով հասարակական-գաղափարական պայքարի վրա, նշում է, որ այսպես կոչված էսնաֆությունը շերտավորվել է, ըստ էության վարել է էսնաֆության «երևելիների» շահերին համապատասխան վարքագիծ: Նրանք սյգ գրույթից, Սվաճյանը սահմանադրության կանոնադրության քննարկման ժամանակ առաջարկել է ոչ մի դեպքում ապագա ժողովրդ շղարձնել էսնաֆների կողմից բնութագրված ներկայացուցիչների օրգան:

Հետաքրքրական էր ֆիլոլոգիական գիտ. թեկնածու Վ. Թերզիրաշյանի գեկուցումը՝ Սվաճյանի «Մեղուն» և թատրոնը» թեմայով: Նա հանգամանորեն ցույց տվեց, որ Հ. Սվաճյանը «Մեղու» հանդեսում գրավել է հայ թատրոնի զարգացման հարցերով: Նա ակտիվ կերպով մասնակցել է Պոլսի հայ ազգային թատերական շարժմանը, շնչտեղով թատրոնի հսկայական դերը որպես հասարակական սրտգրկուսի ազգակու Ըստ Սվաճյանի և նրա օրգան «Մեղու»-ի, թատրոնը պետք է արժարժի հայրենասիրության գաղափարը, նպաստի ազգային ազատագրական պայքարին՝ բնդղեմ սուլթանական բռնակալության: Հ. Սվաճյանը,— ասաց ընկ. Թերզիրաշյանը,— հանդես է եկել ոչ միայն որպես թատերական բնագառ, այլև որպես դրամատուրգ: Նրա «Առանձար Ամատունի» դրաման անցյալ դարի 60-ական թվականներին բեմադրվել է Պոլսի հայկական թատրոնում և մեծ հաջողություն է ունեցել: Այդ պիեսում Սվաճյանը պատմական անցյալը պատկերել է նոր տեսանկյունով, տալով ժողովրդական կյանքի պատկերները: Իսկ մի նորություն էր հայ դրամատուրգիայի ասպարեղում: Այս կարևոր երևույթը դեռևս իր ժամանակին նշվել է հայ մամուլի կողմից: Իր հասարակական առաջավոր գաղափարները «Մեղու»-ի խմբագիրը անց է կացրել նաև իր թատերական-դրամատուրգիական գործունեության մեջ:

Հ. Սվաճյանի այդ գործունեությունը առանձնահատուկ նշանակություն ունի հայ թատրոնի պատմության մեջ:

Այնուհետև լսվեց ֆիլոլոգիական գիտ. թեկնածու Ալիս Մանուկյանի՝ «Հ. Սվաճյանը որպես երգիծաբան» թեմայով հաղորդումը: (Հաղորդումը տպագրվում է «Տեղեկագրի» 3-րդ համարում):

Լսվեց նաև արվեստագիտության թեկնածու Մ. Սարգսյանի հաղորդումը «Մեղու»-ի ծաղրանկարները» թեմայով: Նա ասաց, որ հայ ժողովրդի ազատագրության համար մղած պայքարում «Մեղու»-ի օգտագործած միջոցներից մեկը եղել է ծաղրանկարչությունը:

«Մեղու» թերթում ծաղրանկարներն սկսում են երևան գալ 1859 թ.: Ծաղրանկարները գերազանցապես գծանկարներ են: Ծաղրանկարների թեման բազմազան է, մեծագույն մասը կենցաղային բնույթ ունի: «Մեղու»-ն այս ծաղրանկարներով սուր պայքար է մղել բուրժուական հասարակության վերնախավի և ռեակցիոն գործիչների դեմ: Ծաղրված է հայտնի Չամուրճյանը: «Մեղու»-ի և նրա հակառակորդ ռեակցիոն թերթերի պայքարն ավելի է սրվում 1870 թ., երբ Հ. Սվաճյանի հետ սկսում է աշխատակցել Հ. Պարոնյանը:

«Մեղու»-ի ծաղրանկարները ներկայացնում են հայկական ծաղրանկարչության զարգացման մի նոր աստիճանը և իրենց մեջ կրում են առողջ ու ճիշտ նախադրյալներ ազգային ծաղրանկարչության հետագա զարգացման համար:

«Մեղու»-ի ծաղրանկարներն ունեն խոշոր պատմա-հասարակական և գեղարվեստական նշանակություն: Նրանք անվիճելիորեն կապված են իրենց ժամանակի կյանքի և պատմության հետ և հանդիսանում են էպոխայի հիանալի փաստաթղթեր:

Ընդ որ գեկուցումները լսվեցին մեծ հետաքրքրությամբ:

Մ. ՄԿՐՏՉՅԱՆ